


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013 թվականին (տարեկան վերլուծություն)

Անշարժ գույքի շուկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2000թ.-ից անշարժ գույքի քաղաքացիական շրջանառության գործընթացի ակտիվացման վրա շարունակում են էական ազդեցություն ունենալ հանրապետությունում.


- քաղաքաշինական և ներդրումային ծրագրերի իրականացումը,
  - օրենսդրական դաշտի կատարելագործումը,
  - գործարքների իրականացման ծառայությունների ժամկետների կրճատումը, գործավարության և գրանցման փաստաթղթերի պարզեցումը,
  - ՀՀ հողային օրենսգրքից բխող նորմատիվ իրավական ակտերի ընդունումը,
  - ինքնակամ կառույցների օրինականացումը,
  - անշարժ գույքի շուկայի մասնակիցներից՝ ռիելթորների, անշարժ գույքի գնահատողների, տեղագրական քարտեզագրման և հողաշինարարական աշխատանքներ իրականացնողների լիցենզավորման գործընթացի իրականացումը:
- 2000-2013 թվականների կտրվածքով, հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխություններն ունեն հետևյալ տեսքը.



2013 թվականին հանրապետության անշարժ գույքի շուկայում արձանագրվել է գործարքների քանակական աճ, որի արդյունքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը՝ 190690 միավոր, 2012 թվականի համեմատ աճել է 9.8%-ով կամ 16977 միավորով, այդ թվում Երևանում՝ 9.3%-ով կամ 5828 միավորով, իսկ մարզերում՝ 10.0%-ով կամ 11149 միավորով:


2012-2013թթ. հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժընթացներն ու միտումներն ունեն հետևյալ տեսքը.

**Անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող  
իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխման  
դինամիկաների համադրումը**




2013թ. ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ընդհանուր քանակի 27.6%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Գործարքների ընդհանուր քանակի 35.9%-ը գրանցվել է Երևան քաղաքում: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում մեծ տեսակարար կշիռ ունեն օտարման գործարքները՝ 25.5%:

2013թ. անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. անշարժ գույքի նկատմամբ իրականացված 48716 օտարման գործարքների 74.3%-ը կազմել են առուվաճառքները, 25.1%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 40.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.6%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2013թ. անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2012թ. համեմատ, աճել է 3.6%-ով:

2013թ. Երևան քաղաքում անշարժ գույքի 14677 առուվաճառքի գործարքների 60.5%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2012թ. համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 6.9%-ով:

2013թ. Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/	
	2012թ	2013թ
Կենտրոն	411900	427000
Արաբկիր	341300	355100
Քանաքեռ-Զեյթուն	268900	281900
Նոր-Նորք	232300	249800
Ավան	241600	258400
Էրեբունի	237700	248100
Շենգավիթ	237900	253900
Դավթաշեն	261800	273500
Աջափնյակ	229300	246600
Մալաթիա-Սեբաստիա	227000	239500
Նուբարաշեն	141100	150900
<b>Միջինը Երևանում</b>	<b>257300</b>	<b>271300</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. համեմատ աճել են 5.4%-ով:

2013թ. մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 4611 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. համեմատ, աճել է 6.6%-ով:

2013թ. հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		2012թ	2013թ
Արագածոտն	Աշտարակ	111600	114700
	Ապարան	49700	56200
	Թալին	61200	64000
Արարատ	Արտաշատ	92300	94800
	Մասիս	108900	114400
	Վեդի	97000	99400
Արմավիր	Արարատ	73200	75100
	Վաղարշապատ	151800	154000
	Արմավիր	117600	120900
Գեղարքունիք	Մեծամոր	86000	87300
	Սևան	98000	99100
	Գավառ	53600	59200
	Մարտունի	105200	107600
	Վարդենիս	36100	44000
Լոռի	Ճամբարակ	22600	27800
	Վանաձոր	85800	88200
	Ստեփանավան	74300	74500
	Սպիտակ	99900	99800
	Ալավերդի	51100	54900
	Տաշիր	42500	46500
	Թումանյան	11100	11000
	Շամլուղ	8000	8000
Կոտայք	Ախթալա	19600	20000
	Աբովյան	151800	154600
	Նոր Հաճն	128200	128500
	Բյուրեղավան	107000	108000
	Եղվարդ	108700	109300
	Հրազդան	59300	63600
	Ծաղկաձոր	293300	292500
Շիրակ	Չարենցավան	83500	85300
	Գյումրի	107200	109300
	Արթիկ	64300	66400
Սյունիք	Մարալիկ	36700	40300
	Գորիս	115300	120600
	Կապան	89400	91800
Սիսիան	Սիսիան	82100	90700

	Մեղրի	69100	79500
	Ագարակ	41900	46000
	Քաջարան	95700	94500
	Դաստակերտ	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	85400	94400
	Եղեգնաձոր	118300	123100
	Ջերմուկ	101000	111800
Տավուշ	Դիլիջան	103500	112200
	Իջևան	113100	117900
	Բերդ	51500	59600
	Նոյեմբերյան	42100	48800
	Այրում	25200	31100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2013թ. բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. համեմատ, աճել են 4.3%-ով:

2013թ. հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 5052 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 1362, մարզերում միասին վերցրած՝ 3690: 2012թ. համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 1.6%-ով, ընդ որում, Երևան քաղաքում նվազել՝ 4.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 4.1%-ով :

2013թ. Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Վարչական շրջաններ	Միջին գները/դրամ/	
	2012թ	2013թ
<b>Կենտրոն</b>	463600	475300
<b>Արաբկիր</b>	370200	382200
<b>Քանաքեռ Չեյթուն</b>	280800	294300
<b>Նորք Մարաշ</b>	306900	318400
<b>Ավան</b>	258600	270000
<b>Էրեբունի</b>	227300	238900
<b>Շենգավիթ</b>	244700	254400
<b>Դավթաշեն</b>	263200	275300
<b>Աջափնյակ</b>	239300	249200
<b>Մալաթիա Սեբաստիա</b>	226900	237400
<b>Նուբարաշեն</b>	145000	150000
<b>Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)</b>	<b>275100</b>	<b>285900</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. համեմատ, աճել են 3.9 %-ով:

2013թ. հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության

արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		2012թ	2013թ
Արագածոտն	Աշտարակ	132800	136100
	Ապարան	53600	59800
	Թալին	67000	69100
Արարատ	Արտաշատ	98700	99800
	Մասիս	112000	114900
	Վեդի	100200	102100
	Արարատ	87400	88000
Արմավիր	Վաղարշապատ	150100	153000
	Արմավիր	103500	106900
Գեղարքունիք	Սևան	92900	94700
	Գավառ	51000	57100
	Մարտունի	92300	95800
	Վարդենիս	34700	40600
	Ճամբարակ	26500	30800
Լոռի	Վանաձոր	96900	99900
	Ստեփանավան	87400	89800
	Սպիտակ	112700	113900
	Ալավերդի	45800	49700
	Տաշիր	50700	51900
	Թումանյան	12100	12000
	Շամլուղ	13200	13900
	Ախթալա	29500	29900
Կոտայք	Աբովյան	151100	156400
	Նոր Հաճն	129200	129800
	Բյուրեղավան	120000	120400
	Եղվարդ	115400	116100
	Հրազդան	78800	82500
	Ծաղկաձոր	304600	305000
	Չարենցավան	80100	82900
Շիրակ	Գյումրի	116800	118400
	Արթիկ	61200	63100
	Մարալիկ	48900	52000
Սյունիք	Գորիս	127100	129900
	Կապան	98100	99800
	Սիսիան	89400	95900
	Մեղրի	76500	84200
	Ագարակ	46100	46900
	Դաստակերտ	11600	11600
Վայոց Ձոր	Վայք	83800	89800
	Եղեգնաձոր	112300	116600
	Ջերմուկ	121400	130900
Տավուշ	Դիլիջան	106600	112500
	Իջևան	120800	122900
	Բերդ	58100	59800
	Նոյեմբերյան	46000	47800
	Այրում	34400	35800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. համեմատ, աճել են 3.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2013թ. հանրապետությունում օտարվել են 15728 միավոր /7019.65 հա/ հողեր, որից Երևանում՝ 1705 միավոր /135.88 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 8258 միավոր /6378.61 հա/, որից Երևանում՝ 69 միավոր /46.21 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 5084 միավոր /421.25 հա/, որից Երևանում՝ 900 միավոր /35.55 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1999 միավոր /129.42 հա/, որից Երևանում՝ 688 միավոր /49.72 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 178 միավոր /43.98 հա/, որից Երևանում՝ 48 միավոր /4.40 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 84 միավոր /39.80 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 116 միավոր /5.62 հա/,
- ջրային հողեր՝ 8 միավոր /0.33 հա/,
- անտառային հողեր՝ 1 միավոր /0.64 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. հանրապետությունում օտարված հողերից 12856 միավորի /5616.10 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 1447 միավոր /84.28 հա/, նվիրատվության գործարքներ՝ 2754 միավոր /1375.32 հա/, որից Երևանում՝ 222 միավոր /48.60 հա/ և փոխանակության գործարքներ՝ 118 միավոր /28.23 հա/, որից Երևանում՝ 36 միավոր /3.00 հա/:

Հանրապետությունում 2013թ. հողերի առուվաճառքի գործարքների քանակը, 2012թ. համեմատ, նվազել է 3.0%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.3%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 1.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 2.5%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1359.21 հա, որից 1302.06 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 26.8%-ը կամ 3443 գործարքներ /1065.13 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 848 միավոր /27.10 հա/, իսկ 72.3%-ը կամ 9294 միավորը /4523.59 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 595 միավոր /57.03 հա/: 2013թ. հանրապետությունում արձանագրվել են վարձակալության իրավունքի վաճառքի 119 գործարք /27.38 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային, անտառային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	15	0.75	392	5.03	441	21.32	53	10.31	31	3.57	347	22.70	164	20.45
Արագածոտն	361	220.57	7	2.32	29	1.13	128	8.81	846	585.36	1	0.07	289	31.15	22	2.57
Արարատ	155	168.03	6	1.07	75	5.07	87	1.49	823	454.10	11	2.75	495	42.91	52	1.06
Արմավիր	58	154.29	6	0.61	30	2.12	52	1.17	1017	1147.77	2	0.02	515	52.17	30	1.01
Գեղարքունիք	23	62.85	5	5.20	123	9.95	71	4.61	717	409.53	4	0.38	183	23.38	14	1.72
Լոռի	20	4.97	14	1.54	64	2.11	105	2.09	337	199.97	6	3.59	103	12.05	23	0.30
Կոտայք	127	193.75	9	0.83	204	10.73	191	5.13	959	541.61	8	7.59	756	62.71	103	14.18
Շիրակ	10	9.38	2	0.22	67	2.00	47	2.07	359	344.60	4	1.84	147	17.92	21	0.89
Սյունիք	23	49.48	11	5.58	23	0.74	39	1.08	215	215.48	4	0.08	47	4.52	22	1.18
Վայոց Ձոր	40	49.17	11	1.66	18	1.24	24	1.08	116	156.26	0	0.00	69	7.36	12	0.48
Տավուշ	27	15.63	5	1.33	79	5.11	75	7.66	176	78.40	3	0.41	112	13.00	32	7.62
Ընդամենը	844	928.12	91	21.11	1104	45.23	1260	56.51	5618	4143.39	74	20.30	3063	289.87	495	51.46

Ստորև ներկայացվում է 2013թ. պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	641	13.10	14	0.55	368	3.25	259	9.30	207	14.01	0	0.00	1	0.20	24	1.78	182	12.03
Արագածոտն	95	5.46	2	0.19	14	0.27	79	5.00	144	141.93	75	135.14	5	2.13	15	0.85	49	3.81
Արարատ	21	0.36	1	0.02	5	0.21	15	0.13	292	165.56	145	158.30	5	1.05	70	4.86	72	1.35
Արմավիր	24	0.60	1	0.10	5	0.15	18	0.35	117	155.46	53	152.15	5	0.51	25	1.98	34	0.82
Գեղարքունիք	27	1.70	0	0.00	23	1.44	4	0.26	193	79.14	21	61.09	5	5.20	100	8.51	67	4.34
Լոռի	51	1.17	3	0.82	18	0.11	30	0.24	149	8.70	17	4.13	11	0.72	46	2.00	75	1.85
Կոտայք	29	2.42	1	0.10	18	1.16	10	1.16	493	207.05	118	192.78	8	0.73	186	9.57	181	3.97
Շիրակ	43	0.90	0	0.00	26	0.53	17	0.37	82	10.71	9	7.33	2	0.22	41	1.46	30	1.70
Սյունիք	22	3.59	3	3.02	11	0.50	8	0.07	73	50.10	22	46.28	8	2.57	12	0.24	31	1.01
Վայոց Ձոր	6	0.043	0	0.00	1	0.00	3	0.04	84	50.98	37	47.05	11	1.66	17	1.23	19	1.04
Տավուշ	18	1.17	0	0.00	8	0.16	10	1.01	168	28.57	27	15.63	5	1.33	71	4.95	65	6.66
Ընդամենը	977	30.51	25	4.80	497	7.78	455	17.93	2002	912.21	524	819.88	66	16.32	607	37.43	805	38.58

Հանրապետությունում 2013թ. արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 320 գործարքներ /108.23 հա ընդհանուր մակերեսով/:



Հանրապետությունում 2013թ. հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը, 2012թ. համեմատ, նվազել է 7.1%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 91.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 12.2%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 11.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 20.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 11.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 14.3%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	45	90.81	22.3	7609.5	452.5	485	228.02	365.0	12000.0	3600.6
Ապարան	5	1.74	137.5	2982.9	1009.2	92	56.17	86.5	2727.3	728.5
Թալին	22	39.04	37.7	640.0	103.1	171	135.24	93.6	5494.5	672.4
Ծաղկահովիտ	3	3.56	193.2	2220.0	1253.7	65	138.45	79.5	1000.0	279.6
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	29	18.94	75.9	5555.6	2654.0	398	122.26	335.1	10833.3	2780.5
Մասիս	56	68.58	47.3	4161.1	913.9	192	149.57	200.0	11904.8	3092.7
Վեդի	60	70.79	33.3	4495.2	372.4	218	175.83	207.0	10795.1	1846.7
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	23	92.50	60.4	2205.0	376.8	510	333.72	294.3	9090.0	1336.3
Բաղրամյան	11	38.38	67.5	70.9	70.1	162	557.54	90.6	2561.1	774.9
Վաղարշապատ	19	21.26	60.8	1891.9	602.4	289	154.01	444.4	11764.7	2303.7
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	5	9.97	117.6	700.0	483.0	464	140.59	199.8	1875.0	423.5
Ճամբարակ	2	0.61	180.6	479.6	330.1	74	61.81	60.5	953.3	353.8
Մարտունի	1	0.05	668.0	668.0	668.0	56	8.67	51.1	2850.0	739.1
Սևան	9	31.30	117.9	1221.0	603.9	25	15.54	52.2	2134.8	320.0
Վարդենիս	4	19.17	44.0	678.7	259.2	88	171.76	41.2	2575.1	417.4
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	5	0.61	281.4	3762.0	1806.5	61	32.51	170.4	6424.2	588.0
Գուգարք						91	25.52	234.6	6065.9	768.0
Սպիտակ						12	3.58	250.0	5555.5	731.1
Ստեփանավան	12	3.52	184.7	747.3	518.0	56	50.86	90.6	1686.6	326.6
Տաշիր						98	51.08	45.3	1384.4	158.8
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	50	51.68	75.1	3086.7	533.4	362	174.42	279.3	11942.7	4325.0
Եղվարդ	53	113.23	68.9	2121.2	525.4	383	252.99	174.4	11971.8	2551.3
Հրազդան	15	27.87	44.1	1335.4	693.5	207	102.15	130.5	10256.4	1606.9
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	4	2.24	66.1	687.5	301.9	126	96.44	252.0	1693.1	624.5
Ամասիա	1	2.81	154.0	154.0	154.0	15	49.97	40.9	261.0	126.9
Անի						97	117.41	110.6	546.9	389.3

Աշոցք	3	1.44	66.6	238.9	124.5	25	22.44	58.5	215.8	128.1
Արթիկ	1	0.84	420.0	420.0	420.0	96	58.35	79.4	1428.6	419.0
Սյունիքի մարզ										
Գորիս	8	4.41	149.9	500.0	383.3	44	34.85	92.6	1023.2	728.2
Կապան	13	41.86	137.5	1785.0	508.8	25	13.79	120.0	841.6	361.0
Մեղրի	1	0.02	41000.0	41000.0	41000.0	28	3.68	193.0	3000.0	732.1
Սիսիան						116	162.85	46.3	1977.4	545.9
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	24	26.32	35.4	633.7	156.6	61	121.02	125.0	10000.0	1918.3
Վայք	13	20.73	38.8	8505.0	811.9	53	34.79	58.8	1430.7	633.2
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.20	1775.0	1775.0	1775.0	56	14.73	213.3	3783.8	683.7
Իջևան	18	10.47	154.0	4583.3	739.3	36	22.99	267.5	9454.5	1244.1
Նոյեմբերյան	8	4.96	151.7	4802.4	1309.9	83	39.71	46.7	7368.4	884.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մասնական	Միջին			Նվազագույն	Մասնական	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	9	2475.7	112.7	4040.4	2709.8	232	217558.2	130.7	22200.0	2577.9
Ապարան	2	2188.0	176.9	452.0	314.5	25	28603.0	124.1	609.6	390.0
Թային	4	3882.0	75.6	213.2	149.2	20	36244.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						9	24013.8	60.0	214.3	90.0
Արարատի մարզ										
Արտաշատ	16	16014.1	145.0	5308.3	576.2	144	143436.5	173.9	7140.3	896.7
Մասիս	44	27454.0	841.3	3693.8	1631.0	234	152260.2	187.5	25000.0	1208.7
Վեդի	10	5117.7	645.8	1614.6	1000.7	116	132321.7	126.1	5000.0	661.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	5222.9	316.9	4116.0	2537.6	205	234242	131.6	9090.9	1214.3
Բաղրամյան	1	1200.0	233.1	233.1	233.1	11	14522.0	100.0	833.3	239.9
Վաղարշապատ	18	13370.9	95.9	3828.0	1492.2	289	262763.3	197.4	26528.4	1529.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	26	29613.8	113.2	895.0	205.0	37	41500.9	186.6	1084.3	682.1
Ճամբարակ	2	2077.0	106.6	108.7	107.7	4	9615.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	61	48154.8	113.5	410.7	256.9	109	131341.2	119.3	5000.0	282.0
Սևան	8	4357.3	127.8	1802.1	877.2	10	11997.5	240.0	3110.4	316.0
Վարդենիս	3	884.3	66.6	1200.0	622.2	18	32740.2	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	9	441.4	778.8	1650.0	1369.2	20	24921.0	114.3	1388.9	216.8
Գուգարք	25	8461.1	151.2	4976.6	2311.3	41	44242.3	77.9	14083.3	1243.9
Սպիտակ	8	9210.1	153.3	677.3	277.4	26	30911.3	104.9	1348.3	206.3
Ստեփանավան	2	1800.0	187.2	554.4	370.8	12	14535.3	88.2	1666.7	175.5
Տաշիր	2	112.0	587.8	622.0	604.9	4	5924.8	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	149	65635.8	275.5	5854.1	2755.9	352	280185.1	264.5	35353.5	1990.2
Եղվարդ	33	28007.5	230.0	5471.4	2326.5	343	285891.8	173.6	27000.0	2856.6
Հրազդան	4	2079.0	1272.0	4750.2	3045.8	56	53742.5	117.7	34848.5	1318.0

Շիրակի մարզ										
Ախուրյան	16	4220.7	554.4	4882.0	2476.4	64	58012.6	113.6	18750.0	334.0
Ամասիա	3	1045.0	165.2	165.4	165.4	3	10910.0	45.3	274.7	71.0
Անի	10	5600.0	133.2	404.6	317.7	21	27706.0	67.9	180.6	174.0
Աշոցք						4	22330.0	40.8	144.0	63.5
Արթիկ	12	3778.6	279.2	3933.3	1176.3	53	59703.1	111.8	5000.0	217.2
Սյունիքի մարզ										
Գորիս	1	902.0	425.3	425.3	425.3	11	13488.0	112.2	1700.0	367.7
Կապան	11	1468.8	244.2	2900.0	1502.3	11	5926.0	67.9	2638.9	302.6
Մեղրի						15	8754.9	68.5	632.9	212.5
Սիսիան						10	17025.0	123.5	875.0	209.7
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	8	6830.0	64.8	1496.4	422.1	57	53564.7	96.7	7659.6	504.3
Վայք	9	5519.4	850.6	1312.5	944.0	11	18441.0	120.7	1448.3	220.5
Տավուշի մարզ										
Բերդ	3	4862.0	45.0	1583.3	839.8	10	10163.5	75.8	810.0	117.3
Իջևան	60	38203.2	151.3	3000.0	2303.6	88	102578.0	74.1	14423.1	516.4
Նոյեմբերյան	8	6432.7	176.0	1650.9	792.3	13	15913.2	125.0	1948.1	228.5

2013թ. անշարժ գույքի նկատմամբ իրականացված 8542 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.5%: Ընդ որում, վարձակալության գործարքների 70.2%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2013թ. անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2012թ. համեմատ, նվազել է 3.3%-ով:

2013թ. հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 583 բնակարանների, 921 անհատական բնակելի տների, 3728 հասարակական նշանակության, 963 արտադրական նշանակության օբյեկտների, 2150 միավոր /11613.67 հա/ հողերի, 186 ավտոտնակների և 11 այգետնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 164 վարձակալության գործարքների, այդ թվում 92 միավոր /1.11 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2012թ. համեմատ նվազել է 20.0%-ով:

2013թ. հանրապետությունում վարձակալված 11613.67 հա հողերից 11.94 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 11601.74 հա հողերից 1066.54 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 42.38 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 4932.50 հա, որից 4912.93 հա՝ գյուղատնտեսական նշանակության: 2013թ. հանրապետության մարզերում վարձակալվել են 10145.65 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2013թ. անշարժ գույքի նկատմամբ իրականացված 24055 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.6%-ը: 2013թ. գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. համեմատ, աճել է 8.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.2%/, առանձնատների /24.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.0%/ և հողերի /7.5%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13195 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. համեմատ, աճել է 13.0%-ով:

2013թ. հանրապետությունում գրավադրվել են 2987.16 հա մակերեսով հողեր, որից 195.77 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 87.9%-ը կամ 2624.50 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 5.40 հա: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 1232.24 հա, որից 1203.91 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2013թ. հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 1895 գործարքներ, որից 1305-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 79.1%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 13.7%-ն՝ անհատական բնակելի տների, 3.7%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.4%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 0.3%-ն՝ ավտոտնակների, 1.2%-ն՝ ամառանոցների և 1.7%-ը՝ հողերի, այդ թվում 0.6%-ը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: 2012թ. համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 25.7%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 36.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 7.5%-ով:

2013թ. հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 21621 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2012թ. համեմատ նվազել է 0.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.3%, իսկ քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.8%/:

**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**